

«Շինենի նոր-երգնկան խորհրդային
Հայաստանի Մէջ»

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՄ-ԵՐԶՆԿԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՇԻՆԱՑ

ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ

ԺՈՂՈՎԻ

Ե Ի

ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՄ-ԵՐԶՆԿԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՇԻՆԱՑ

ՄԻՈՒԹԵԱՆ

062

Հ-20

1459-84

8.- Կիրակոս Տէրտէրեան, Կէօլնցիքի Ուսումնասիր-
րացէն, Տիթրոյթէն,

9.- Ալէք Սահակեան, Տիթրոյթէն,

10.- Արամ Մարտոյեան, Տիթրոյթէն,

11.- Ճան Ժամկոչեան, Տիթրոյթէն,

12.- Հայրապետ Պետրոսեան, Տիթրոյթէն,

13.- Արշակ Ալճեան, Տիթրոյթէն:

Դիւանի Ընտրութիւն

Դիւանի ընտրութիւնը կատարուեցաւ բաց քէտով. ըն-
տրուեցան՝

Ա. Նախագահ՝ Ռուբէն Սրապեան,

Բ. Նախագահ՝ Հմայեակ Ֆէսճեան,

Ա. Քարտուղար՝ Արշակ Ալճեան,

Բ. Քարտուղար՝ Արամ Ազնաւուրեան:

Ա. ՆԻՍՏ

Առաջին նիստը սկսաւ նախագահութեամբ Ռուբէն
Սրապեանի եւ Քարտուղարութեամբ Արշակ Ալճեանի:

Նախագահը մեր որդեգրած նպատակի վեհութիւնը,
որն է Շինել Նոր-Նորգնիւնիս. Հայաստանի մէջ, մեր միակ
գործունէութեան հիմքը ըլլալը բացատրելէ վերջ, կոչ ը-
րաւ պատգամաւորներուն, որ գիտակցին իրենց պարտա-
կանութեան եւ անվերապահ կերպով արտայայտուին լուծ-
ուելիք հարցերու մասին: Ընտրուեցան երեք Յանձնա-
խումբեր, որոնք են. —

Ա. — Հարցերու Դասաւորման Յանձնախումբ.

1.- Արամ Ազնաւուրեան,

2.- Արշակ Ալճեան:

Բ. — Բանաձեւերու Յանձնախումբ.

1.- Միքայէլ Պետրոսեան,

2.- Լեւոն Սրապեան Հէրըլտ:

Գ. — Ծրագիր-Կանոնադրի Յանձնախումբ,

1.- Լեւոն Սրապեան Հէրըլտ,

2.- Միքայէլ Պետրոսեան

3.- Արամ Տոնոյեան,

4.- Ճան Ժամկոչեան,

5.- Սիսակ Նորատունկեան,

6.- Արամ Ազնաւուրեան,

6.- Հմայեակ Ֆէսճեան,

8.- Կիրակոս Տէրտէրեան:

Պատգամաւորական Ժողովը յոտնկայս եւ միաձայնու-
թեամբ որոշեց պատուոյ նախագահներ. —

Ա. — Խ. Հայաստանի Ժ. Կ. Խ. Նախագահ Արրահամ
Գուլոյեան:

Բ. — ՀՕԿ-ի Երեւանի Գլխաւոր Վարչութեան Նախա-
գահ՝ Գրիգոր Վարդանեան:

Գ. — Համ-Երզնկացիական Վերաշինաց Միութեան Ե-
րեւանի շինարար մարմինը իր ամբողջ կազմով, որոնք են. —
ԲԺ. Խաչիկ Պարթեւ Սէրսեան, Կարապետ Սարաֆեան, Սե-
պուհ Խանճեան, Ազատ Մանուկեան, Գուրգէն Քէլլէրեան,
Օգսէն Աշրգեան, Հայկ Զլատուղեան, Պետրոս Զաթարլաշ-
եան, Ներսէս Խանճեան եւ Խաչիկ Աստույեան:

Օրակարգ Անդրանիկ Համագումարի

1.- Մասնաճիւղերու Զեկոյց:

2.- Մեր դիրքը եւ յարաբերութիւնները Երզնկա գա-
ւառի ալիւլայլ ուսումնասիրաց եւ վերաշինաց միութիւն-
ներու հանդէպ:

3.- Խորհրդանիշի մը ընտրութիւնը:

4.- Ծրագիր-Կանոնադրի մշակում:

5.- Համ-Երզնկացիականի պարբերաթերթի մը հրա-
տարակութիւն:

6.- Նոր-Երզնկայի շինարար մարմնի խմբանկարի ընդ-
հանրացում:

7.- Նոր մասնաճիւղերու կազմութիւն:

8.- Բարձր Հայքեան հեռանկար:

9.- Համ-Երզնկացիականի Կրօսերաց Լիկաներու կազ-
մութիւն:

10.- Հիմնադրամի քէմփէյն:

11.— Այլ շրջաններ կեդրոնի հարց :

12.— Յաջորդ Պատգամաւորական Ժողովի վայրը եւ թուականը :

13.— Կեդրոնական Գործադիր Մարմնի ընտրութիւն եւ վայրը :

14.— Ողջոյնի հեռագիրներ :

Ա.— Մասնաճիւղերու Զեկոյց

Տիթրոյթի Մասնաճիւղի կողմէ զեկոյց Արշակ Ալճեան :
Մասնաճիւղը ներկայիս ունի 80 անդամ : Մէկ տարուայ մէջ հիմնադրամէ, ձեռնարկներէ եւ անդամավճարներէ դոյա-
ցած գումարը 1,124 տոլար դրաւ Պատգամաւորական Ժո-
ղովի տրամադրութեան տակ : Կ'արժէ յիշել սոյն մասնաճիւ-
ղը, որ կորիզը դարձաւ Համ-Երզնկացիականի չարժման :

Տիրպորնի Մասնաճիւղի կողմէ զեկոյց Արամ Աղնա-
ւուրեան : Ունին 12 անդամ եւ իրենց որպէս հիմնադրամ
եւ ամսատուրք գոյացուցած 87 տոլար գումարը ենթա-
կեց համագումարին :

Նիւ Եորքի Մասնաճիւղին կողմէ զեկոյց Արամ Տո-
նոյեան : Միութեան կազմուած օրէն սկսեալ պատմական
գործունէութիւնը նկարագրելէ վերջ, յոյս յայտնեց որ
կրկնապատկուած եռանդով Նիւ Եորքի մասնաճիւղը գոր-
ծի պիտի սկսի նպատակ որդեգրելով Նոր Երզնկայի կա-
ռուցումը Խ. Հայաստանի մէջ : Ներկայիս ունին 55 ան-
դամ :

Հայլէնտ Փարքի Մասնաճիւղի կողմէ զեկոյց Հմայեակ
Ֆէսճեան : Ունին 13 անդամ. ամսատուրքերէ եւ հիմնադր-
րամէ գոյացած 114 տոլար գումարը յանձնեց Համագում-
արի դիւանին :

Թոլիտոյի Մասնաճիւղի կողմէ զեկոյց Միքայէլ Պետ-
րոսեան : Ունին 12 անդամ : Մասնաճիւղը նոր կազմուած
ըլլալով՝ կը խոստանայ յառաջիկայ տարեշրջանին աշխոյժ
գործունէութիւն մը ունենալ եւ նիւթապէս օժանդակել
որդեգրած նպատակին :

Կէօնցիք Գիւղի Ուսումնասիրացի կողմէ զեկոյց տը-
ւաւ Կիրակոս Տէրտէրեան, որ որդեգրելով Միութեանս
նպատակը՝ Միութեան մօտ եղած կանխիկ գումար 125 տո-
լարը յանձնեց դիւանին, իսկ 121 տոլար պանքի գումարը
խոստացաւ յանձնել երբ որ գանձեն :

Մասնաճիւղերու զեկոյցներէ վերջ՝ Համագումարը ող-
ջունեցին հետեւեալ բարեկամ կազմակերպութիւնները, ո-
րոնք ընդունուեցան դղրդադին ծափահարութիւններով :

Ներկայացուցիչներ եկած էին Համա-Քղեցիականէն,
Տիթրոյթի 204-ի Երեք մասնաճիւղերէն, Պ. Հ. Կ. Խաչի
կողմէ եւ Արարիկի Միութեանէն :

Բ.— Մեր Յարաբերութիւնը եւ Դիրքը Երզնկա Գաւառի վերաշինաց եւ Ուսումնասիրաց Միութիւններու Հանդէպ

Այս հարցի շուրջ բաւական երկար վիճարանելէ եւ
քննելէ վերջ՝ Ժողովը միաձայնութեամբ հետեւեալ բա-
նաձեւը որոշեց .—

Համագումարը բարեկամական դիրք կ'որդեգրէ Երզն-
կա գաւառի բոլոր վերաշինաց եւ ուսումնասիրաց միու-
թիւններու հանդէպ, պիտի ջանայ եւ կոչ ուղղէ զանոնք
միութեանս նպատակին շուրջ բոլորելու համար : Սփիւռքի
անգործ ու թշուառ Երզնկացի աշխատաւորներու վատթար
պայմաններէ ազատելու ճամբան միայն Նոր-Երզնկայի կա-
ռուցումն է Խ. Հայաստանի մէջ :

Գ.— Խորհրդանշի Հարց

Կեդրոնական Մարմինը մասնաճիւղերու կարծիքը առ-
նելէ վերջ Միութեանս խորհրդանշը պիտի պատրաստէ :

Առաջին Ժողովը վերջ գտաւ ժամը 5-ին Կ.Ե. : Յար-
գելի նախագահ՝ Ռուբէն Սրապեան, զեղեցիկ կերպով վեր-
լուծեց պատգամաւորներու արտայայտութիւնները, շինիչ
եւ խրախուսիչ խօսքերով փակեց առաջին նիստը :

Երկրորդ Նիստը սկսաւ, ժամը 7-ին Կ.Վ. Նախագահութեամբ Հմայեակ Ֆէսճեանի եւ Քարտուղարութեամբ Արամ Աղնաւուրեանի: Նախագահը Միութեանս նպատակի եւ անոր յաջողութեան համար առնուելիք գործնական քայլերու շուրջ արտայայտուելէ վերջ՝ Ժողովը սկսաւ օրակարգի հարցերու շարունակութեան:

Դ. — Ծրագիր-Կանոնագրի Հարց

Յանձնախումբի պատրաստած Ծրագիր-Կանոնադիրը կարդացուեցաւ եւ մի քանի փոփոխութիւններով վաւերացուեցաւ:

Ե. — Պարբերաբերքի Հրատարակութիւն

Համագումարը Միութեանս պրոպականդը տարածելու եւ մեր կազմակերպութեան գործերը լայն կերպով ժողովրդականացնելու համար, պարբերաբերքի մը հրատարակութիւնը անհրաժեշտ գտնելով, խնդրոյ վերջնական կարգադրութիւնը յանձնեց Կեդրոնական Գործադիր Մարմնին:

Զ. — Շինարար Մարմնի Նկարի Ընդհանրացում

Համագումարը որոշեց յանձնարարել Կեդր. Վարչութեան, որ Խ. Հայաստանէն եկած Շինարար Մարմնի խմբակարը մեծազանակ վերարտադրելով պիտի բաժնուի մասնաճիւղերուն հիմնադրամին ի հաշիւ սպասուելու համար:

Է. — Նոր Մասնաճիւղերու Կազմութիւն

Նկատելով որ Ամերիկայի եւ արտասահմանի շատ մը քաղաքներուն մէջ համախմբուած հայրենակիցներ կան, ուր դեռ մասնաճիւղեր գոյութիւն չունին եւ Նոր-Երզնկայի կառուցումը ի կատար հանելու համար անհրաժեշտ է բոլոր Երզնկացիներու համախմբումը Միութեանս շուրջ, այս իսկ պատճառով նոր մասնաճիւղեր կազմելու կարեւոր աշխատանքը յանձնեց Կեդր. Գործադիր Մարմնին:

Ը. — Բարձր Հայփեան Հեռակար

Բարձր Հայփեան հեռանկարի համար կարծիքներու փոխանակութենէ վերջ՝ որոշուեցաւ յանձնարարել Կեդր. Մարմնին, որ այս ուղղութեամբ երբ առաջարկներ կուգան զանազան միութիւններէ, ընդառաջել անոնց եւ համադրածակցաբար աշխատիլ զայն իրականացնելու:

Թ. — Կրտսերաց Լիկեր

Համագումարը նկատելով, որ Կրտսերաց Լիկերու կազմութիւնը կրնայ ուժեղացնել Միութեանս գործունէութիւնը, ուստի որոշեց Ծրագիր-Կանոնագրի մէջ մասնաւոր յօդածով մը իրաւունք տալ թէ կազմութեան եւ թէ անոնց ներկայացուցիչներուն հաւասար ձայնով մասնակցելու Պատգամաւորական Ժողովներու:

Ժ. — Հիմնադրամի Քէմփէյն

Սոյն հարցը Նոր-Երզնկայի հիմնադրաման տեսակէտէ Համագումարի ամենակարեւոր հարցն էր: Միաձայնութեամբ որոշուեցաւ 5,000 տոլարի Փոնտ մը բանալ մինչեւ 1936 Մարտ 1: Քէմփէյնի յաջողութեան համար ամէն ջանք չպիտի խնայուի, որովհետեւ դա կը նշանակէ միութեանս նպատակի իրագործման գլխաւոր ազդակը: Յանձնարարուեցաւ Կեդր. Մարմինը նախաձեռնող ըլլալ քէմփէյնի գործին, նկատի ունենալով մասնաճիւղերու համեմատական թիւը, իսկ անոր վարելու եղանակը ձգել տեղական մասնաճիւղերուն:

ԺԱ. — Այլ Շրջաններ Կեդրոնի Հարց

Համագումարը որոշեց որ արտասահմանի մէջ միայն մէկ Կեդրոնական Մարմին կարող է գոյութիւն ունենալ: Զանազան երկիրներու մէջ կարող են շրջանային մարմիններ գոյութիւն ունենալ, որոնք Կեդրոնական Մարմնոյ պիտի ենթարկուին եւ անոր հետ իրենց յարաբերութիւնները պահեն:

ԺԲ. — Յաջորդ Պատգամաւորական Ժողովի վայրը եւ
Թուականը

Որոշուեցաւ յաջորդ Պատգամաւորական Ժողովը դու-
մարել Նիւ Եորք ամառնային շրջանի մը:

ԺԳ. — Կեդր. Գործադիր Մարմնի Ընտրութիւնն ու վայրը

Կեդր. Գործադիր Մարմնի վայրը պիտի ըլլայ հոն,
ուր անդամներու մեծամասնութիւնը կը գտնուի: Բաց քը-
ւէով եւ բացարձակ մեծամասնութեամբ ընտրուեցան հե-
տեւեալ Կեդր. Գործադիր Մարմնի անդամները, որոնք են՝

1. — Ալէք Սահակեան, Տիթրոյիթ,
2. — Արամ Մարտոյեան, Տիթրոյիթ,
3. — Արամ Տոնոյեան, Նիւ Եորք,
4. — Արշակ Ալճեան, Տիթրոյիթ,
5. — Հմայեակ Ֆէսճեան, Հայլէնտ Փարք,
6. — Յովհաննէս Ժամկոչեան, Տիթրոյիթ,
7. — Ռուբէն Սրապեան, Նիւ Եորք:

Այս տարեշրջանի Կեդր. Գործադիր Մարմնի վայրը
եղաւ Տիթրոյիթ:

ԺԴ. Ողջոյնի Հեռագիրներ

Ժողովը մեծամասնութեամբ որոշեց՝ ողջոյնի հեռա-
գիրներ ղրկել Խ. Հայաստանի նախագահութեան, ՀՕԿ-ի
Երեսանի Գլխաւոր Վարչութեան եւ Նոր-Երզնկայի շինա-
րար յանձնախումբին:

Համագումարի հարցերը վերջացած ըլլալով՝ նախա-
գահ Հմայեակ Ֆէսճեան Ժողովի յաջորդ ելոյթին եւ մեր
զաւրիք տարեշրջանի գործունէութեան առթիւ իր լաւադոյն
հրահանգները եւ խրախուսանքները տալէ վերջ, Համա-
գումարը փակուեցաւ ժամը 12-ին կեցեցէներու եւ դզրդա-
գին ծափահարութիւններու տակ: Իւրաքանչիւր պատգա-
մաւոր իր կարելին ընելու խոստումով բաժնուեցաւ Համ-
երզնկացիական Վերաշինաց Միութեան Անդրանիկ Համա-
գումարէն:

ՄՐԱԳԻՐ-ՎԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՄ-ԵՐԶՆԿԱՅԻԱԿԱՆ ՎԵՐԱՇԻՆԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Միութեանս անունն է Համ-Երզնկացիական Վերաշի-
նաց Միութիւն, վերակազմուած Մայիս 6, 1934-ին, Մ.
Նահանգներ Ամերիկա:

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Միութեանս նպատակն է Խ. Հայաստանի մէջ հիմնել
Նոր Երզնկա անունով աւան մը եւ հնարաւորութիւն ստեղ-
ծել արտասահմանի Երզնկացիները հոն փոխադրելու:

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Միութեանս խորհրդանիշի պատրաստութիւնը համա-
ձայն Անդրանիկ Պատգամաւորական Ժողովի որոշման
յանձնուած է Կեդր. Գործադիր Մարմնոյ, նկատի ունենա-
լով նաեւ մասնաճիւղերու թեւադրանքները:

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Միութիւնս հիմնուած է վերաշինական գետնի վրայ,
իր դերքը բարեկամական է բոլոր վերաշինական միութիւն-
ներու հանդէպ, չունի ոեւէ կուսակցական հակամտութիւն,
հետեւաբար բացարձակապէս չեզոք հողի վրայ հիմնը-
ւած է:

ՅՕԴՈՒԱԾ Ե.

1. — Ամեն Երզնկացի եւ ոչ-Երզնկացի անհատ առանց
սեռի խտրութեան կրնայ անդամակցիլ Միութեանս:

2. — Իրաւասու անդամ կը նկատուին 18 տարեկանէն
վեր եղողները: 18 տարեկանէն վար եղողները կրնան ան-
դամակցիլ Համ-Երզնկացիական Կրտսերաց Լիկերուն:

3. — Իւրաքանչիւր անդամի պարտականութիւնն է վճա-
րելու մէկ կամ աւելի տօլար մուտք: Տարետուրք այրերու
համար՝ երկու տօլար իսկ կիներու համար մէկ տօլար է:

4.— Անդամ մը արձանագրուած օրէն ընտրել եւ ընտրութեան իրաւունք ունի:

5.— Որեւէ անդամ Մասնաճիւղէ մը ուրիշ Մասնաճիւղ փոխադրուելու համար, պէտք է կանխաւ իր պատկանած Մասնաճիւղի հաւանութիւնը ստանայ:

6.— Անդամ մը կը դադրի անդամակցութենէ իր տարետուրքը չի վճարելու պարագային: Բացառութիւն կը կադմեն (տնտեսական վատթար պայմաններու ենթարկւողները եւ զանց կ'առնուին սոյն պարտադրութենէն):

7.— Պատուոյ անդամ կը համարուին անոնք՝ որոնք բարոյական եւ նիւթական մեծամեծ զոհողութիւններով կամ մասնակի մեծ գումարներով եւ կամ կտակներով նպաստած են Միութեանս նպատակին:

8.— Որեւէ անդամ երբ զիտակցաբար դէմ կ'երթայ Միութեանս շահերուն եւ կ'անտեսէ կանոնադրային տրամադրութիւնները կը կախակայուի Միութենէս իր պատկանած Մասնաճիւղի անդամական ժողովի առաւելագոյն քուէով: Բայց այս կարգի որոշման ենթակայ եղող անձը իրաւունք ունի խնդիրը ենթարկելու Կեդրոնական Գործադիր Մարմնի առ ի քննութիւն:

ՅՕԴՈՒԱԾ 2.

1.— Կեդրոնական Գործադիր Մարմնի միջոցաւ կամ իր թոյլտուութեամբ զանազան գաղութներու մէջ կը կազմուին Մասնաճիւղեր, ուր հինգ կամ աւելի Երդնկացիներ կան եւ կ'ուզեն անվերապահօրէն սատարել Միութեանս նպատակին:

2.— Մասնաճիւղերը կ'ունենան իրենց վարչական մարմինները նուազագոյն երեք, առաւելագոյն եօթը հոգիէ բաղկացեալ, որոնք կը վարեն Մասնաճիւղի ընդհանուր գործերը եւ պատասխանատու են Մասնաճիւղի անդամական ժողովին:

3.— Մասնաճիւղի վարչութիւնները կ'ընտրուին տարին մէկ անգամ, անդամական ժողովի մը մէջ ներկաներու ա-

ռաւելագոյն քուէներով: Վարչութիւնը կը բաղկանայ Ատենապետ, Քարտուղար, եւ Գանձապահ մը, իսկ վարչութեան միւս անդամները կը մնան խորհրդատու անդամներ: Վարչական ընտրութիւնը եւ հրաժարումը Քարտուղարը պարտի ենթարկել Կեդրոնական Գործադիր Մարմնի վաւերացման:

4.— Վարչութիւնը կը գործադրէ Անդամական Ժողովի որոշումները միայն եւ համարատու է իր կազմով անդամական ժողովին:

5.— Պատասխանատու անդամ մը, որ երկու կամ երեք յաջորդական ժողովներու ներկայ չի գտնուիր, եւ իր բանաւոր պատճառները չի յաղորդեր ժողովին, ինքնաբերաբար կը դադրի պաշտօնէն:

6.— Վարչութիւնները իրաւասու են յանձնախումբեր կազմելու եւ անոնց բացառիկ գործեր յանձնել՝ պայմանաւ, որ անոնք պատասխանատու ըլլան վարչութեան:

7.— Իւրաքանչիւր Մասնաճիւղի Գանձապահը պարտաւոր է կանոնաւորապէս պահելու Մասնաճիւղի դրամական գործառնութեանց կանոնաւոր հաշիւները եւ այդ հաշիւներու վարչութեան կողմէ վաւերացուած պատճէնները:

8.— Երեք ամիսը անգամ մը կամ Կեդրոնական Գործադիր Մարմնի մասնաւոր հրահանգով, Մասնաճիւղի Գանձապահները պարտաւոր են իրենց մօտ եղած պատրաստի գումարները փոխադրել Կեդրոնական Գործադիր Մարմնի Գանձապահութեան:

9.— Մասնաճիւղերը իրենց ընդհանուր հասոյթին միայն տասը տոկոսը կրնան յատկացնել տեղական ծախքերուն: Որեւէ ժամանակ քսան եւ հինգ (§25) տոլարէն աւելի գումար պարտին ուղարկել Կեդրոն:

10.— Մասնաճիւղերու անդամական ժողովները կանոնաւորապէս կը գումարուին կանխորոշ ժամանակներու մէջ կամ վարչութեանց անհրաժեշտ նկատած ատեն եւ կամ Կեդրոնական Գործադիր Մարմնի մասնաւոր հրահանգով՝ արտակարգօրէն:

11.— Անդամական ժողովը օրինաւոր կը համարուի երբ անդամներու կէսէն աւելին ներկայ են: Եթէ առաջին ժողովին օրինական մեծամասնութիւն չի գոյանայ, երկրորդ ժողովը օրինաւոր կը նկատուի, խիստ կարեւոր որոշումներ եւ կարգադրութիւններ յետաձգելով յաջորդ ժողովին:

12.— Մասնաձիւղերը իրաւունք չունին Միութեան անունով հանգանակութիւններ ընելու՝ առանց Կեդրոնական Գործադիր Մարմնի հաւանութեանը:

13.— Կեդրոնական Գործադիր Մարմինը կը կախակալէ որեւէ մասնաձիւղ, որ չի անսար Կեդրոնական Գործադիր Մարմնի հրահանգներուն եւ այդ կերպով ինքզինքը կը դնէ հակակազմակերպական դերքի մը մէջ: Յանցապարտ Մասնաձիւղի մը վերջնական վճիռը վերապահուած է Պատգամաւորական Ժողովին:

ՅՕԴՈՒԱԾ Է.

Քննիչ Յանձնախումբ

Վարչութեան տարեկան ընդհանուր գործունէութիւնը եւ հաշիւները քննելու համար, կ'ընտրուի երեք հոգիներ Գննիչ Յանձնախումբ մը, վարչական ընտրութեան նախընթաց անդամական ժողովին կողմէ, որու տրամադրութեան տակ կը դրուին վարչութեան ամբողջ գոյքերը: Գննիչ Յանձնախումբը իր քննութեան արդիւնքը պարտաւոր է գրաւոր կերպով ներկայացնել վարչական ընտրական անդամական ժողովին:

ՅՕԴՈՒԱԾ Ը.

Համ-Երզնկացիական Կրտսերաց Լիկաներ

1.— Համ-Երզնկացիական Վերաշինաց Միութեան Մասնաձիւղերը իրաւասու են կազմել իրենց կողքին Կրտսերաց Լիկաներ եւ տալ բարոյական օժանդակութիւն:

2.— Կրտսերաց Լիկաներու անդամագրողներու տարիքը պէտք է ըլլայ մինչեւ 20 տարեկան:

3.— Կրտսերաց Լիկաները կ'ունենան իրենց վարչութիւնը բաղկացեալ երեք անդամէ, Ատենապետ, Ատենադըպիր եւ Գանձապահ, եւ կը վարեն իրենց գործը:

4.— Վարչութեան գործը պիտի ըլլայ կազմակերպել սփորթի խաղեր, նուագախումբեր:

5.— Համ-Երզնկացիական Կրտսերաց Լիկերը իրաւասու են մասնակցել համազօր ներկայացուցիչով Միութեանս պատգամաւորական ժողովներուն:

Նիւթական Միջոցներ

Ա.— Մուտքի դրամ.

Բ.— Անդամավճարներ.

Գ.— Զեռնարկներ:

Կազմալուծում

Կրտսերաց Լիկայի մը լուծման պարագային դրամ, գոյք եւ ամեն տեսակ գործիքներ կը յանձնուին տեղւոյն մէջ Համ-Երզնկացիական Վերաշինաց Միութեան Մասնաձիւղին:

ՅՕԴՈՒԱԾ Թ.

1.— Կեդրոնական Գործադիր Մարմինը Միութեանս բարձրագոյն՝ վերահսկիչ եւ ղեկավար մարմինն է: Բաղկացած 7 անդամներէ, որոնք կ'ընտրուին Միութեանս Պատգամաւորական Ժողովէն եւ կը վարեն Միութեանս գործերը, Պատգամաւորական Ժողովի գծած սահմաններու մէջ, մէկ տարուայ ժամանակամիջոցաւ:

2.— Կեդրոնական Գործադիր Մարմնի անդամներու մէկի բացակայութեան պարագային, յաջորդ առաւելագոյն քուէն առնողը կը հրաւիրուի պաշտօնի՝ բացակային տեղը, որուն պաշտօնէութեան չըջանը կը լրանայ յաջորդ Պատգամաւորական Ժողովին:

3.— Կեդրոնական Գործադիր Մարմինը իրաւունք ունի տեղական վարչութիւններու հետ խորհրդակցութեամբ անհատ անդամներ նշանակել Միութեանս գործերուն աւելի մղում տալու համար:

4.— Միութեանս դրամները պահ կը դրուին երեք հոգիի անունով: Դրամական գործառնութեանց պատասխանատու է Կեդրոնական Գործադիր Մարմինը ամբողջութեամբ: Մակայն դրամական խնդիրներու վերաբերեալ գրութիւններն ու փաստաթուղթերը պէտք է կրեն միայն Նախագահի, Քարտուղարի եւ Գանձապահի ստորագրութիւնները, երբ այդ գրութիւնները վաւերացուած են Կեդրոնական Գործադիր Մարմնի լիազօմար նիստէն:

5.— Կեդրոնական Գործադիր Մարմինը ունի պաշտօնէութեանց հետեւեալ բաժանմունքները: Նախագահութիւն, Քարտուղարութիւն, Գանձապահութիւն, եւ Հաշուապահութիւն:

6.— Նախագահի պարտականութիւնն է՝ հսկել ժողովներու կանոնադրութեան, որոշումներու անթերի գործադրման, Քարտուղարի հետ ստորագրելով բոլոր պաշտօնական թուղթեր կամ շրջաբերականները:

7.— Քարտուղարի պարտականութիւնն է՝ ժողովներու հարազատ արձանագրութիւնները պահել, թղթակցութեանց եւ պրօպականդի գործերը օրը օրին կատարել եւ պաշտօնական գրութեանց ներքեւ ստորագրել Նախագահի հետ:

8.— Գանձապահի պարտականութիւնն է՝ ստացած դրամները դրամատունը դնել օրը օրին, անոնց մաքուր հաշիւները պահել եւ ամեն մի ժողովին հաշուեցոյց մը ներկայացնել:

9.— Հաշուապահին պարտականութիւնն է՝ հաշիւներու կանոնաւորութեան հսկել, երեւմտութիւն հաշիւէն օրինակ մըն ալ ինքը ունենալով ուրոյն տոմարի մը մէջ:

10.— Կեդրոնական Գործադիր Մարմինը իր բոլոր հաշիւներու եւ գործառնութեանց համար պատասխանատու է Միութեանս Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին:

11.— Կեդրոնական Գործադիր Մարմինը պարտաւոր է երեք ամիսը անգամ մը իր հաշիւներու հաշուեկշիռը ներ-

կայացնելու մասնաճիւղերու եւ ի պահանջել հարկին՝ մամուլի միջոցաւ:

ՅՕԴՈՒԱԾ Ժ.

1.— Պատգամաւորական Ժողովը Միութեանս դատական եւ օրէնսդիր մարմինն է: Պատգամաւորական Ժողովէն յետոյ իր տուած լիազօրութեամբ Միութեանս Բարձրագոյն Մարմինը կը հանդիսանայ Կեդրոնական Գործադիր Մարմինը, որ պատասխանատու է յաջորդ Պատգամաւորական Ժողովին:

2.— Պատգամաւորական Ժողովը տեղի կ'ունենայ տարին մէկ անգամ, բոլոր Մասնաճիւղերու ներկայացուցիչներու մասնակցութեամբ: Մինչեւ 20 անգամ ունեցող օրինաւոր եւ պարտաճանաչ մասնաճիւղ մը կրնայ տալ միայն մէկ պատգամաւոր, իսկ 20-է աւելի անգամ ունեցողներ, յաւելուածական մէկ պատգամաւոր՝ իւրաքանչիւր քսանի համար:

3.— Արտակարգ Պատգամաւորական Ժողով կը գումարուի Կեդրոնական Գործադիր Մարմնի անհրաժեշտ նրկատած պարագային կամ Մասնաճիւղերու երկու երրորդի մեծամասնութեան պահանջով:

4.— Միութեանս Պատգամաւորական Ժողովին ներկայացող իւրաքանչիւր պատգամաւոր պարտական է զինքը ընտրող Մասնաճիւղի Վարչութեան կողմէ վաւերացեալ պաշտօնական վկայական ունենայ, ուր անպայման արձանագրուած պիտի ըլլայ իր գործօն մասնակցութիւնը Միութեանս մէջ:

5.— Իւրաքանչիւր պատգամաւոր մինչեւ երկու քուէի իրաւունքով կրնայ ներկայանալ Պատգամաւորական Ժողովին:

6.— Կեդրոնական Գործադիր Մարմինը իրաւասու է Պատգամաւորական Ժողովին տալ երկու ներկայացուցիչներ, որոնք բացի հաշուեքննիչ յանձնախումբի անդամութենէ համադր են միւս պատգամաւորներուն:

Պատգամաւորական ժողովի Աշխատանքները

Ա.— Միութեանս նպատակի յառաջացման եւ գործադրման համար տնօրինութիւններ ընել:

Բ.— Գծել օրէնքներ եւ կանոններ առանց հակասելու Միութեանս նպատակին:

Գ.— Քննել Կեդրոնական Գործադիր Մարմնի ընդհանուր տարեշրջանի գործունէութիւնը, տալ իր անաչառ գընահատականը այդ գործունէութեան:

Դ.— Ընտրել Կեդրոնական Գործադիր Մարմին մը յաջորդ տարեշրջանի համար:

ՅՕԴՈՒԱԾ ԺԱ.

Հասոյթի Միջոցներ

Միութեանս նպատակը իրագործելու համար, մեծ հասոյթ մը ապահովելու միջոցներ կը նկատուին՝

Ա.— Մասնաճիւղերու մուտքերը եւ անդամատուրքերը:

Բ.— Ընդհանուր հանգանակութիւն լայն շրջանակներու մէջ:

Գ.— Հանդէսներ, երեկոյթներ եւ այլ ձեռնարկներ:

Դ.— Փոխան Ծաղկեպսակի եւ բացառիկ նուէրներ:

Ե.— Գիւղական Միութիւններէ աջակցութիւններ:

Զ.— Կտակներ:

Է.— Ապահովագրութեան գումարներ:

ՅՕԴՈՒԱԾ ԺԲ.

Դրամական Գործածութիւն

1.— Գիւղական Միութիւններէն, ընդհանուր հանգանակութիւններէն, բացառիկ նուէրներէն եւ կտակներէն գոյացած գումարները ամբողջութեամբ կը գործածուին Նոր-Երզնկայի շինարարական մարմնի հրահանգի եւ կտակատէրի կամքի համաձայն: Իսկ տեղական ծախքերը պիտի հոգացուին Միութեան քանքերով գոյացած այլ գումարներէ:

2.— Կեդրոնական Գործադիր Մարմինը բացի բացառիկ ծախքերու համար գործածելիք գումարներէն, իրա-

ւունք ունի միայն երկու հարիւր (\$200) տօլար պահելու իր մօտ, յաւելեալ գումարները, որոնց քանակը կը հասնի հինգ հարիւր (\$500) տօլարի. պարտաւոր է գործադրել Նոր-Երզնկայի շինարարական մարմնի հրահանգի համաձայն, եւ կամ փոխադրել Նոր-Երզնկայի շինարարական մարմնի իւր հայաստան:

ՅՕԴՈՒԱԾ ԺԳ.

Նոր-Երզնկայի Շինարար Յանձնախումբ

Միութիւնս իւր հայաստանի մէջ կ'ունենայ Նոր-Երզնկայի շինարար յանձնախումբ մը, որ կը կատարէ Միութեանս բոլոր հրահանգներն ու յանձնարարութիւնները Շինարար մարմինը պարտաւոր է իր տարեկան ելեւմտից հաշիւները պաշտօնական մարմիններէ վաւերացուելէ վերջ՝ ներկայացնել Միութեանս Կեդրոնական Գործադիր Մարմնին:

ՅՕԴՈՒԱԾ ԺԴ.

Վերջաբան

Որքան ատեն, որ մասնաճիւղ մը գոյութիւն ունենայ Միութիւնը իր գործը կը շարունակէ, հակառակ պարագային Միութիւնը կը լուծուի եւ իր մօտ գտնուած բոլոր գոյքերն ու գրամները կը յանձնուին Նոր-Երզնկայի շինարարական մարմնի, որ կը գտնուի իւր հայաստանի մէջ:

ՅՕԴՈՒԱԾ ԺԵ.

Կանոնագրի Փոփոխութիւն

Միութեանս Կանոնագրի որեւէ յօդուած կրնայ փոխուիլ բացի նպատակէն, Պատգամաւորական ժողովի մը մէջ երկու երրորդի քուէով: Որեւէ բարեփոխումի պարագային ծանուցումներ ղրկուելու են մասնաճիւղերուն՝ Պատգամաւորական ժողովէն առնուազն երկու ամիս առաջ: Միութեանս Կեդրոնական Գործադիր Մարմնի հասցէն է՝

Central Committee of Pan-Erzincan Reconstruction Ass.


P. O. Box 54, Porter St. Station

Detroit, Mich., U. S. A.

Հեռագրի հասցէ՝

2102 N. Green Ave. Detroit, Mich.,

ՀՀ Ազգային գրադարան



Ամբողջ Երզնկացիներու միացեալ ջան-
 քերով պիտի կերտենք Նոր-Երզնկան, որ
 աշխատաւոր, անդաստական մեր հայրենա-
 կիցներու միակ գործունէութեան նպատա-
 կը եւ հին աշխատաւորական Երզնկայի յու-
 շարձանը պիտի ըլլա:

